

# ԱԼՓԵՏՍՈՒՐԵՐ

ՇԱ.Բ.Ա.Թ.Ա.Թ.Ե.Ր.Թ.

ԿՐՈՆԱԿԱՆ, ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

The Weekly AVEDAPER. American Bible House, Constantinople.

ՀԱՏՈՐ ԿԶ.

Կ. ԹՈՒԼԻՄ ՀՈԿՏԵՄԲԵՐ 18, 1913

ԹԻՒ 42

## ՃԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՐԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

ՎԵՐ. Ա. Պ. ՇՄԱԿՈՆԵԱՆ

Ալպանական խնդիրը

Ճիշերը հանգարափիլ կը սկսին Պալքաններուն մէջ : Ալպանևսերպ ընդհարումները կորսոնցացած կը թուլին առաջին թափը, Անրոց բանակը յաջողեցաւ ևս մղել յարձակումները և կը ինստատանայ բաւականանալ այդքանով առանց սահմանագլուխը փոխել փորձելու : Խընդիրը փակուած չէ բնականաբար . արդէն Արեւելքի մէջ խնդիր մը գո՞ացուցիչ կերպով լուծել և վերջնական կերպով փակել ամէն սովորութեան և ամէն կանոնի հակառակ կը սեպուի : Ալպանական խնդիրն ալ, իր կարգին, անլոյժ պիտի մնայ, մինչեւ այդ խորհրդաւոր երկրին սահմանները որոշուին հիւսիսէն, հարաւէն և արեւելքէն, մինչեւ այդ սահմանները յարգուին Սերպիոյ, Յունաստանի և Ալպանիոյ կողմանէ, մինչեւ նորակառոյց երկրին վեհապետը ընարուի և կառավարական ձեւը որդեգրուի և այդ վեհապետին հպատակին և այդ կառավարութեան համակերպին խմայիլ Քէմալ, Էսատ, իսա Պոլաթինաղ և նմաններ, մինչեւ Աւստրիա և Խառլիա գո՞ացում զանեն իրենց մասուցած «աշխացութեան» համար և Ալպանիա ի վիճակի ըլլայ ինքինքը պաշտպաննելու իր թշնամիներուն և բարեկամներուն դէմ: Ե՞րբ պիտի ըլլայ այս ամէնը, չինք գիտեր, գուցէ այն ատեն՝ երբ Ալպանիա իր գրոց գիւտին հազարհինդհարիւրամեայ տարեդարձը տօնէ :

Յունական խնդիրը

Թուրքելոյն բաղխման վտանգն ալ մինչեւ սատիճան մը կորսնցուց իր սուր հանգաման- նատէր և բարեկեցիկ տաւնեած

քը : Եշաններ կային որոնց վրայ հիմնուելով շատեր կարծեցին թէ Թուրքը բանակը արշաւելով արեւմտեան Թրակիոյ վրայէն, զոր տակաւին զրաւած չէ Պուլկար բանակը, պիտի յարձակի Սէրէզի և Սէլանիկի վրայ : Այս վտանգին պատաճառաւ էր որ Յունաստան դադրեցուց իր զօրացրուումը և սկսաւ գարձեալ համախմբել իր զօրքը Սէլանիկի և Սէրէզի շուրջ : Եւ թէև ցորչափ կղզիներու սեփականութեան խնդիրը լուծուած չէ և վազմերու և հպատակութեանց մասին Թուրքիոյ և Յունաստանի միջև համաձայնութիւն գոյացած չէ, միչտ կայ ու կը մնայ երկու բանակներուն իրարու վրայ խուժելուն վասնգը, կացութիւնը զգալի կերպով բարւոքած կ'երեւի վերջերս :

Միասանեաւող մամուն

Թրքահայոց մէջ գրոց գիւտի և տպագրութեան մեծ յորելեանը տօնելու համար հասնդմը երեւան եկաւ վերջին ժամուն : Պոլսոյ և գաւառներու մէջ եկեղեցական և ատենախոսական հանդէսներ պիտի սարքուին և թոյլ պիտի չարուի որ անյիշատակ անցնի ազգային այս մեծ տօնը : Խուսահայերը աւելի գործնական և շատ աւելի օգտակար միջացը գտած են տօնելու համար Տառի և Տիպի յորելեանը՝ արդէն իսկ ութ հարիւր հազար ոռուպ հաւաքած ըլլալով գլորցական գնունին համար : Ինչ փոքրիկ գումար որ մենք կարող ըլլանք հաւաքել մեր շատ ու շատ խօսքերուն վրայ՝ պիտի ստիպէ մեզ ամօթով խոսովանիլ թէ կարելի չէ բաղդատութեան դնել մեր ըրածը անոնց ըրածին հետ : Պիտի ջանանք անցուչտ ինքինքնիս արդարացնել գիտել տալով թէ մեր մէջ քիչուր են հարուսաները, մինչ մեր Ռուսաստանի ազգակիցները բազմաթիւ միլիոն

Այս տեսակ չքմիղանք մը այս ատեն միայն արժէք պիտի ունենար, երբ մենք գոնէ մեր հարստութեան համեմատ գումար մը ալպահոված չենք տակաւին: Պիտի ըստու դարձեալ թէ մեր երկրին չուրջ և մեր երկրին մէջ քաղաքական այնպիսի տագնապ մը տիրեց ամբողջ տարին, և տակաւին ալ կը տիրէ, որ մեր ժողովուրդը ի վիճակի չեր զուտ գրական-կրթական խնդրոյ մը տալ իր ուշադրութիւնը: Բայց այս չքմիղանքն ալ իր մէջ կը պարունակէ դրազդ խոստովանութիւնը թէ մենք չափազանց անձնատուր եղած օրուան խարսափիկ հոսանքներուն՝ հասած չենք ազգային գիտակցութեան այն աստիճանին որ կարող ըլլայինք չափել և ստուգել թէ ի՞նչ է կենականը ազգի մը կենաքին մէջ:

#### Մեր հակատագիրը

Հայկական խնդիրը, ուրիշ անդամ ալ ըստ ենք այս տողերուն մէջ, կարելի չէ նկատել զուտ գրադաքական խնդիր մը որ կախում ունի օտար բանակներու շարժումներէն և օտար զիւսնադէսներու կամքէն ու գործունէութենէն: Մեղի համար Հայկական խընդիրը Հայուն արժանիքին, Հայուն կենսունակութեան, Հայուն զարգացման խնդիրն է ի՞նչ ալ ըլլայ Պուլկարիոյ բաղդը, ի՞նչ ալ ըլլայ Բրիտանական, Իռուսական կամ Գերմանական քաղաքականութիւնը, Հայերը վերջի վերջոյ պիտի բանեն այն գիրքը և պիտի ապահովին այն ճակատագիրը որուն արժանի են: Գրոց զիւսին ժամանակը, տպագրութեան սկզբնաւորութեան օրերուն մէջ, Հայ ազգը քաղաքականապէս շատ աւելի նախանձելի վիճակի մը մէջ չեր քան այսօր: Բայց Սահակ և Մեսրոպ և Վուանչապուն քաջութիւնը ունեցան նուիրելու իրենց կեանքը Մտքի և Հոգիի գործին, մինչ թագաւորութիւնը կը կործանէր և երկիրը կը հեծէր օտար բանականներու արիւնուր և սպասող լուծին ներքի:

#### Ճակատակ դժուարութեանց

Դարաւոր վեհապետութիւններ կը կործանին և կ'անհետին, բայց մտածող միտքը միշտ ապակախ է ու աղատ: մարմինը կ'իյնայ, կը գալարի բնակալութեան գարշապարին ներքիւ, բայց հոգին անպարտելի է յաւիտեան և ազգի մը համար անհրաժեշտ է ապահովել

բարձր միաք ու կենականի հոգի, ի՞նչ ալ ըլլայ անոր թագաւորութեան և բանակներուն վիճակը: Կ'ընդունինք թէ զժուար է աիրանալ մտաւորական և հոգեւոր զարգացման, երբ զրկանք և կեղեքում և անիրաւութիւն են բաժինը մարմինին: բայց նոյն այդ զժուարութեան չափովը արժանի են մեր երախտագիտ յիշատակութեան անսոնք որ երկրին դառն տառապանքներուն մէջ զրին հիմունքը առողջ գրականութեան և հաստատուն կրօնի: Նոյն այդ զժուարութեան չափովը պարտիմք իւրացընել հաւատագը մեր այն մեծ նախնեաց, որ խաւարին մէջ սերմաննեցին լոյսի սերմերը:

#### Քարձր սիթէ եւ մահուր հոգի

Կը բաւէ՝ որ քան զրադեցանք բարձր քաղաքականութեամբ: Ըմբռնինք թէ իրենց ճակատագիրը ուրիշներուն յանձնողները և իրենց բարօրութեան համար օտարէն ողորմութիւն մուրացողները ախուր ճակատագրի մը և արգահատելի վիճակի մը միայն կրնան համնիլ: Դարձնենք մեր ուշադրութիւնը մեր ներքին կեանքքին, բարձրացնենք միտքը և հոգին, մեր աշխատաւթիւնը թափենք հոն ուր թինամեաց ատելութիւնը կարող չէ աւերներ զործել, ունենանք բան մը որ օտարներու բարեհաճութիւնն անկախ ըլլայ և եթէ մեր երկիրը լաւագոյն օր մը տեսնէ՝ զարգացած մտքով և հոգիով ողջունենք զայն: Իսկ եթէ պիտի ստիպութինք խոնարհեցնել մեր գլուխները նոր նոր հարուածներու ներքեւ, զոնէ մեր միտքը բարձր մնայ և մեր հոգին մաքուր:

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

#### ՔԻՒՍՈՍ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Հրեաներն ինչո՞ւ մերժեցին դՔրիստոս: Տարակոյս չկայ թէ ազգն իր ամրադշութեամբ մերժեց զայն, թէեւ ծմարիտ է թէ առաքեալներն ու առաջին Քրիստոնեաները ամէնն ալ չուութիւնէ զարձողներ էին: Խաչելութեան ժամանակ ազգին երեւելիները, ոչ միայն իրենց այլ և ժաղովրդին կողմէ խօսելով, ըսին Յիսուսի համար: «Անոր արիւնը մեր վրայ ու մեր որդիներուն վրայ ըլլայ:» Անոնք դՔրիստոս մերժեցին կատարեալ զիտակցութեամբ թէ ի՞նչ կ'ընէին: Զէին ուղեր որ այն մարդը իրենց